

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ԻՍՍՅԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի մի-
ջոցով, ժողովրդի կամքով եւ
ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհա-
նուրի հաւատարմապէս բարե-
կեցիկ կեանք — դա է մշակա-
րիտ ազատութիւն:



ԵՐԳԻԾԱՐԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ 5 ֆր.
ԿԵՍ ՏԱՐԻԱՆ 3 ,,
ՄԻ ՀԱՄԱՐԸ 1/2 ,,

Ժողովրդի, դու ինքը մի-
այն կարող ես ձեռք բերել քո
ազատութիւնը:

Արեան ծահիծներ — ասո
ազատութեան մանապարհը:

Ժողովրդի, մի՛ աղերսիր,
այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԼՕՆԴՕՆ

Nr 4. ՅԻՍՏՈՍ. Nr 4.

1896

ՄԻ ԱՄՍԵԱՅ



«ԱՊՍԱՍՏՐՈՒԹԻՒՆ».

Մենք կը տեղեկանանք, թէ մեր սիրելի
դրացի Դաշնակցութիւնը նոյնքան համակուած
է ազգասիրական ոգով, որքան և Հնչակեան
կուսակցութիւնը: Այդ Դաշնակցութեան Կ.
Պօլսի Դաշնակիցն ամառնային վերջին ամսան
վերջին օրերը ցանկացաւ ցոյց տալ իր ե-
ռանդը հայ ժողովրդեան և հայ հայրենիքին
համար: Դաշնակիցը «ապստամբութիւն» ըրաւ
Կ. Պօլսոյ մէջ քսան-քսան և հինգ մարդով
պանկ օթոմանը կոխելով:

Կը հաւատանք, թէ Համետ օնպաշին կան-
խապէս տեղեկի ըլլալով և կամենալով առան-
ձին փայլ մը տալ այդ «ապստամբութեան»
իր ամենէն քաջ զօրքերն առաջունէ պատ-
րաստած էր և համակուած իր ազգասիրական
ոգով՝ իր թիւրք խուժանին հրահանգած էր
«ապստամբութեան» օրը մեծ ջարդ մը ընել
մայրաքաղաքին հայերուն մէջ՝ յանուն թիւրք
ժողովրդեան և թիւրք հայրենիքին:

Կիմացուի թէ Դաշնակիցը խրատուած չըլ-
լալով անցեալի փորձերէն՝ «ապստամբութիւն»
ըրաւ Կ. Պօլսոյ մէջ այն նպատակով որ ա-
տիկայ ցոյց մը ըլլայ «Եւրոպայի դէմ» և
պաշտօնապէս ալ սպառնացեր է որ եթէ Եւ-
րոպան հայոց ազգն այժմ ալ չազատէ՝ Դաշ-
նակիցն իր «ամբողջ զօրութիւնը պիտի թա-
փէ» Կ. Պօլսոյ մէջ, առայժմ այս անգամի
համար բաւական համարելով միայն իր քսան
մարդու «զօրութիւնը» սուլթանի և Եւրոպայի
«հախէն գալու» համար: Իսկ Եւրոպական
տէրութիւններու և մամուլի կարծիքն է, թէ
սուլթանն, ընդհակառակը, խրատուած ըլլալով
անցեալի փորձերէն՝ իր նոր ջարդով նոր ե-
րաշխաւորութիւն կուտայ նոյն Եւրոպային, թէ
օսմանեան կառավարութեան մէջ պատահած
խռովութիւն մը կրնայ զսպել և խաղաղու-
թիւնը «վերահաստատել» հարկը պահանջած
միջոցներով, որպէս նաև իբրեւ նոր խրատներ
հայերուն, հարկը տեսածին պէս նոր ջարդեր
ալ ընել տալ Հայաստանին մէջ:

Միւս կողմէ ալ հեռագիրներու ամենա-
հաւաստի աղբիւրներէն կը տեղեկանանք թէ
Եւրոպական մեծ պետութիւնները, համակուած
մարդասիրական զգացումով դէպի հայերը՝ ի-
րենց մարտանաւները կը ղեկեն եղբւր թիւրք-
քական ջրերը պաշտպանելու համար սուլթա-
նի գերիշխանութիւնն իր ամեն հպատակներու
վրայ և թիւրքիայի ամբողջութիւնը, որպէս նաև
զգաստացուցիչ և յուսադրական ցոյց մը ընելու
հայերու աչքին:

Այս առթիւ կիմանանք թէ Եւրոպական
գիւտագիտութեան հրէական բազմաթիւ մէջ
սակարկութեան զրուած է Հայաստանը, որին
համար հիմակ ու հիմա միայն Ռուսն է որ
ամենէն շատ կուզէ վճարել, բայց տակաւին

թիւրքին հետ սակարկութեան մէջ համաձայ-
նութիւն մը չէ կրցեր կայացնել: Եւ յոյս
կայ որ ամեն «զօրութիւն թափող» իր դաշն
զօրութիւնը՝ պիտի թափէ այդ վառագին առ-
ջէն առնելու համար, նոր վառագին մը սպառ-
նալով Եւրոպային:

Կիմացուի նաև թէ նոյն իրեն սուլթանի
հարէ-մի հուրիներու մասնաւոր տեսակցութեան
մը ատեն ըրած պաղատանքով ու ջանքով եւրո-
պական տէրութիւններու Կ. Պօլսի գտնուած
ներկայացուցիչներն պիտի ղեկեն եղբւր իրենց
մարտանաւներէն ազատել թիւրքական ջրերը,
այն հուրիներէն իւրաքանչիւր ներկայացուցիչ
առանձնապէս փափուկ երաշխաւորութիւն մը
առած ըլլալով թէ սուլթանն իր կայսրութիւնն
այսօր կուզէ պաշտպանուած տեսնալ Եւրոպա-
յի կողմէ, որովհետեւ այդ կայսրութիւնը վաղը
բաժին-բաժին պիտի ընէ եղբւր նոյն իրենց եւ-
րոպական տէրութիւններուն մէջ:

Իսկ այսպէս Կ. Պօլսի «ապստամբութիւնը»
մեծ ազդեցութիւն ըրաւ Եւրոպայի վրայ, որը
և պիտի հայի արիւնով ոռոգուած և աճած
արտերը հնձէ յանուն մարդասիրութեան,
խաղաղութեան ու շահամոլութեան:



ԹԷ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԱՐԴԻԿԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ.

տաւն և երկու նորագոյն պատուիրանաց
երկու երեսը.

Ունիս հանձար — քեզմէ կը վտնան.
Ունիս աղնութիւն — կըսեն քեզ պարզամիտ.
Ունիս ընկերական ոգի — քեզ կը դաւաճանեն.
Ունիս անկեղծութիւն — քեզ կը զրպարտեն.
Ունիս եռանդ — այն կը մարեն.

Ունիս կամք — կըսեն բռնաւոր.
Ունիս խելք — տխմարներն են դատաւոր.
Ունիս հասարակական գիրք — քեզ կը դըրեն.
Ունիս աշխատութիւն — այն կը քանդեն.
Ունիս խօսք — այն կաղաւաղեն.

Ունիս դադափար — քեզ կայպանեն.
Ամեն առաքնութիւն — կը հալածուի:
միւս երեսը հետեւեալն է.

Կընէ դաւեր — վարպետ է՝ կըսեն.
Կընէ անիրաւութիւն — ճարպիկ է՝ կըսեն.
Կընէ վատութիւն — սխալ ըրաւ կըսեն.
Կընէ կեղծիք — վարվել գիտէ կըսեն.
Կընէ քարուքանդ — կը շինէ՝ կըսեն.
Կընէ մատնութիւն — ստիպուեցաւ՝ կըսեն.
Կընէ զրպարտութիւն — իրաւունքն է՝ կըսեն.
Կընէ քծնութիւն — հարկ է՝ կըսեն.
Կընէ շատխոսութիւն — ճարտար է՝ կըսեն.
Կը դրժէ խօսքը — միտքը փոխեց՝ կըսեն.
Տգեւտ է — հանձար է՝ կըսեն.

Ամեն ստորութիւն — կը փառաբանուի:
ՄՏՐԱՆ.

ՆՈՐ ՊԵՇՆՁ

Վերջերս կարգ մը բաղադրանքներ յեղա-
փոխականներու կատարած դրամական զեղ-
ծումները պատճառ եղան նոր պահանջ մըն
ալ աւելցնել յեղափոխականներու վրայ:

Մեր հարուստները, այլ ևս չհաւատալով
խօսքի կամ ու է պաշտօնական գրութեան, կը
պահանջեն, որ իրենց գիտող յեղափոխական-
ները ու է նշան մը ցցունեն իրենց մարմնոյն
վրայ:

Մենք — կըսեն մեր հարուստները — թով-
մաս առաքեալին կը հետեւինք. մինչև որ
մարմնաւոր աչք չտեսնենք ու չընենք ձեր
յեղափոխականութեան յայտարար նշանը այլ
ևս չենք հաւատար: Հետեւեալը «նշանաւոր»
գործիչները՝ պէտք է նշանաւոր ըլլան:

Բայց որովհետեւ «նշանաւոր» կարծուած
գործիչներուն ոչ մէկն ալ նշանաւոր չեն,
ուստի ստիպուած ենք խորհուրդ տալ անոնց
որպէս զին ազգի սիրուն համար, երթան և
իրենց գլուխները պատերուն, քարերուն զար-
նեն ու այդպէսով մի քանի նշանաւորութիւն
ստանան:

Արդէն գիտենք որ «նշանաւոր» գործիչնե-
րը այն սկզբունքին կը հետեւին թէ՛ նպա-
տակի համար ամեն միջոցները ի է:

ԳՆԴԱՎԱՀԱՐ.

Յ. Գ. Մոռացանք ըսելու որ, գիւրաւ նշան-
ներ ստանալու համար կարելի է նաև Համիտ
օնպաշին գիմել:

ՆՈՅՆ.



ՎՈՆԳԱՎԸ.

Մենք, չէսխիւլ խալամ բարդուղիմէս, ծառա
Քրիստոսի, պատրիարք հայոց Կ. Պօլսոյ, շնոր-
հովն օգոստոսփառ կայսեր Սուլթան Համիտի,
որ է ջահերուն ջահը, լոյսերուն լոյսը, իմաս-
տագոյն ու գիտաւատ տէրն օսմանեան սուրբ
կայսրութեան՝ ներկայ Կոնստանդնուպոլսի
կը բարբա-
ռենք ի գիտութիւն համայն սիրելի հօտս հայ
ոչխարաց՝ օրհնութիւն, տխմարութիւն և վատու-
թիւն:

Բարձրանալով պատրիարքական դահլը, մեր
սրբազան պարտքն համարեցինք, բարձրագոյն
խորհուրդովն և ներշնչումովն աստուածատիպ
կայսեր, խորհուրդ գումարել օսմանեան կայ-
սրութեան երեւելագոյն իմաններէն և չէսխիւլէն,
քննել սիրելի հայ ազգիս ներկայ վիճակը,
հարկ եղածը ազգարարել ազգիս և անօրինել
մեր վեհափառ հայր Սուլթանի հրամանները
և վճիռները և Անոր հաւատարիմ և արգա-
րասէր պաշտօնեաներուն ձեռքով գումարեալ
խորհրդին որոշումները և ըստ արժանւոյն պատ-
ժել անօրէնները և հայ սիրելի ոչխարացս հօ-
տը ի կարգի բերել շեղեալ ճանապարհէն,



Ժամանակակից Եւրոպական քաղաքացիական պաշտամ Աստուածութիւն

քաւել տալ իր մեղքերը և արժանի կացու-
ցանել զանկա Սուլթան Համիտ խանի ոտ-
քերը լզելուն այս կեանքի մէջ և սուրբ ջէն-
նէթի ամեն շնորհներուն անդի աշխարհին
մէջ:

Այլ յայտարարեմք —

Կարգ մը սրիկաներ իմ սիրեցեալ Հայ հո-
տէն ըմբոստանտով Օգոստոսիան Կայսեր Հայ-
րախնամ կոտորածներու պատճառաւ, ճիգեր
կը թափեն օսմանեան ոսկեկոտ լծէն ազգը
փրկելու ոճիրին մէջ նետուիլ, պատերազմներ
ընել, ազատ խօսիլ, ազատ կառավարել Հայ
ժողովուրդը և օսմանեան մեծ տէրութեան սուրբ
անօրինութեան հակառակ ընթացք մը բռնել:

1) Ի նկատի առնելով, որ կարգաւորեալ
տէրութեան մը հիմը կը կազմէ ժողովրդեան
խեղճութիւնը և տգիտութիւնը, մինչդեռ գը-
րերը և խօսիլը այն միակ միջոցներն են, որոնց-
մով կարելի է մտքերի և գաղափարների փո-
խանակութիւն ու շփումն առաջացնել ազգիս
մէջ և անոր մտքերը լուսաւորելու ծանր ոճի-
րը գործել:

2) Ի նկատի առնելով որ այդ գրելու և
խօսելու միջոցներով ըմբոստանեան գաղափար-
ներ կը տարածուին, որպէս և հասարակաբա-
նական գիտական ճշմարտութիւններ և արդա-
րասէր ու ազատասէր ձգտումներ, ըստ որում
այդպիսով բացայայտ կերպով ջանք կը դըր-
ուի Հայ ժողովրդեան և Հայ անհատին միտ-
քին ու հոգին ազնուացնել և իրենց իրաւանց
պաշտպան կացուցանել:

3) Ի նկատի առնելով որ ամեն հայրախնամ
կառավարութեան և ամեն օրինակարգ տէրու-
թեան գոյութեան հիմնական պայմաններէն մին
է նաև որ ժողովուրդն իրեն ստրուկ ճանչնայ
նախ տէրութեան ամենէն գլխաւորին, կայսեր,
և նոյնպէս անոր ամեն պաշտօնեաներուն մինչև
զափթիէ. որ այդ ստրկութիւնը պիտի ըլլայ
կատարեալ թէ մտքի, թէ հոգւոյ և թէ ինչեց
տեսակէտէն:

4) Ի նկատի առնելով նոյնպէս, որ իւրա-
քանչիւր անհատ օրինաւոր կայսրութեան մը
մէջ իր անձովն ամբողջովին կը պատկանի վե-
հափառ կայսեր, որն ալ բացարձակ իրա-
ւունք ունի անոր պատուին, կեանքին և մահին
վրայ և հարկ տեսած ժամանակը մեծ կայս-
րը, իբրև աստուածային ընտրեալ և յաջոր-
դէն Մարգարէի, կրնայ այդ պատիւն անպատ-
ւել, այդ կեանքը մահացնել և այդ մահն
անմահացնել և հարկը հազարներու արեան
բացարձակ թափողն ու տէրն ինքն է և միայն
ինքը:

5) Ի նկատի առնելով նմանապէս, որ օ-
տար ազդեցութեանց շնորհով և Եւրօպայի
ապականեալ քաղաքակրթութեան և տէրու-
թեան մը փնտրեալ գրգռմով օսմանեան
կայսրութեան սահմանները կտրելով մահ-
սան ենքաբար, զաւաղ ջիւղութեամբ
Եւրօպական գաղափարներ, մտքեր և կարգ մը
դժոխային ծրագիրներ կանցնեն օսմ. կայս-
րութեան մէջ և կը պղտորեն ու ցնորական,
փնտրեալ յոյսեր կը ներշնչեն սիրեալ Հայ
ժողովրդեան տգէտ գանկին մէջ: —

Ուստի կը անօրինեմք.

Արգելեալ է կապարգրիչ կամ գրիչ առ-
նել ձեռքը, արգելեալ է բերան բանալ և
խօսիլ, արգելեալ է ակաջով լսել և աչքով
տեսնել և կայսրութիւնը պիտի ըլլայ համի-
րու, խուլերու և կոյրերու հոյակապ և փա-
ռաւոր շէնք մը: Արպէս զի գրելու, խօսելու,
լսելու և տեսնելու գայթակղութիւն չըլլայ վե-
հափառ հայր Կայսեր բարձր շնորհով կը կար-
գադրվի որ հայերու մատները ջարդուին, լե-
ղունները կտրուին, ականջների մէջը տաղուի և
աչքերը հանուին: Այդ իմաստուն տնօր-
նութեան համաձայն ամեն նորածիններու հետ
ալ ծնվելուն պէս այդպէս պէտք է վարվին:
Ատոր պաշտօնը կատարելու համար գլխաւոր
սովորանքն կողմէն նշանակված են կարգ մը
պաշտպանութիւն ունեցող գեղեր և նոյն պաշ-
տօնը կատարելու համար բացարձակապէս ի-
րաւունք է սրված ամեն թիւրքերուն և օսման-
եան քաջարի զօրքերուն և ոստիկաններուն:
Եթէ հայ ազգս անվեհերութիւն ունեցաւ չը
հնազանդելու այդ կարգադրութիւններուն, որ
այլ ևս ազգիս բարեբաղդութեան միակ օրէնք-
ները պիտի կազմեն, հրեշտակասիրտ սուլթա-

նին հրամանով անհնազանդները պիտի կո-
տորուին: Եւ դաս ըլլալու համար ամբողջ
հայ ազգիս, վեհափառ Կայսրն այդ մտք ար-
դէն երկու տարի է ի վեր արժանաւոր ջար-
դերն ընել կուտայ և հարկը հազար անմեղ-
ներու արիւնը թափելով՝ կը նախազգուշացը-
նէ ամեն կենդանի մնացած հայերուն որ ատոնք
ալ նոյն բողոքին պիտի արժանանան, եթէ
միտներու պէտք չը կոտորվին կամ չը փախն
իրենց երկրէն Հայաստանը ամայացնելով: Կը
յայտարարենք նաև թէ գրելու, խօսելու, լը-
սելու և տեսնելու արմատն ու հիմքն ըլլալով
մատնելու կայթակղիչ և փնտրեալ սովորու-
թիւնը, լուսափառ Համիտ Կայսր բաւական
չը տեսնելով մարդկային էակի այդ չորս բը-
նական ամենաառաջին յատկութիւններու բը-
նաչինք ընելը հայերի մէջ, կը անօրինէ և կը
հրամայէ, որ ոչ մի հայ անհատ այլ ևս մը-
տածելու իրաւունք չը պիտի ունենայ և որ հայու
համար, խուլ ու կոյր երեսին վրայ մտածման
նշոյլ մը նկատուեցաւ՝ անմիջապէս պիտի ձեռ-
բակալուի և պատժուի մահան պատժով:

Այդ նպատակին համաձայն կարգված են
յատուկ պաշտօնեաներ, որոնք հայոց երեսին
վրայ մտքի մը նշոյլ տեսածին պէս պիտի այդ
միտքը օգին մէջ բռնեն և յանցաւորին հետ
միասին կապկապած կախաղանէն կախեն, և
դժողբին ու Աստուծոյ ամեն անէծքներ ու
նզովքներ այժմէն իսկ կը կարգամք մենք:

Կերկայ Կոնգաղը տնօրինեալ է օգոստոսիան
Համիտ Կայսեր կողմէ, վաւերացեալ է հրաւիր-
ուած շէյխերու և իմամներու յատուկ խոր-
հրդին կողմէն և կնքեալ Կ. Պոլսոյ ազգափնաս
պատրիարքարանի կնիքով, որով կը ստորա-
գրեմք:

Թիւ Մուհամմէտի.

1314

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՍ ԵՊ.

Պատրիարքական տեղապահ Կ. Պոլսոյ.

ՋՐԱՆՈՐՆԵՐՈՒ ՅՈՅՑ


Փողոցի մը անկիւնը երկու Պոլսեցի երի-
տասարդներ սա խօսակցութիւնը կընէին:

— Ծօ, Կօպէրնիկ, աղբար ան չէ ամա, սա Յոյց
ըսածին ի՞նչ բան է քի ես չեմ հասկընար,
ստոր մարիֆէթը ի՞նչ է:

— Բարեկամս, գիտես որ ամեն բան արդիւնք
մը ունի. ցոյցերն ալ իրենց ցոյց արդիւնքը
կունենան. Պոլսոյ մէջ այս տեսակ ցոյցեր կըլ-
լան, որպէսզի Եւրոպական տէրութիւններու
զրահաւորները հոս գան:

— Է, հոս գան նէ ի՞նչ կըլլայ քի:

— Ի՞նչ պիտի ըլլայ, Յոյց կըլլայ, մենք ալ
ան ատեն Սէրայ Պոլսունէն բերանարաց կը
նայինք. հապա դիւրին բան է Եւրոպական կա-
ռավարութիւններու ան ահագին զրահաւոր-
ները տեսնել:






ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԱՍԵՐԻԿԱՅՈՒՄ.

Ընդհանուր պատգամաւորական ժողով է
գումարուած, Պոսթօն-ի միջ, ներկայ են հե-
տեալ հայկական ընկերակցութիւնների ներ-
կայացուցիչներն. 1. Տնտեսական միութիւն. 2.
Հայկազեան խաչակիր. 3. Հայկական միութիւն
4. Խրիմեան միութիւն, 5. Լուսինեան միութիւն
6. Կոթողեան միութիւն, 7. Հայկազեան կաճառ,
8. Հայոց հայրենասիրական Դաշնակցութիւն,
9. Տիեզերական միութիւն, 10. «Հայր» եան,
11. Հայկազեան յեղափոխական միութիւն 12.
Օթեակեան. 13. Մուստ և տես, 14. Գաղտնի
բաղաբան 15. Գրօշակեան 16. Հայ յեղ.
Դաշնակցութիւն, և ուրիշ շատ մը... եան...
եան միութիւնների ներկայացուցիչներն. Բա-
ցուկայ են միայն Հնչակեաններն. — ատենա-
պետ է ընտրուած Օթեակեանների ներկայա-
ցուցիչ Պատ. Ս. եան, — Ժողովի ամենագլխա-
ւոր խնդիրն է ընդհանուր միութիւնը — ատե-
նապետը հետեալ բանաձեւութիւնը կը խօսի
նոյն խնդրոյ նկատմամբ. « Պարոններ այստեղ
հաւաքուած ենք 16. էն աւելի ընկերութիւն-

«ԱՊՏԱԿ» ՀԱՆՆԼՈՒՄՆԵՐ.

ԹԻՒ 5



ԹԻՒ 4 ԲԵՊՈՒՍԻ ԼՈՒԹՈՒՄԸ.

Հօ-բէ-վարք- արջեր- իրան- ձուեր- չին-
շուն- չին- աւել-իսաս-տիկ- կը պատէ-րազ-
մի-ն: — Հոգեվարքի արջեր իրանց վերջին շուն-
ջին աւելի սաստիկ կը պատերազմին:

Ներու պատգամաւորներ. մեր էն գլխաւոր գոր-
ծըն է Միութիւն հաստատելն բայց որովհետեւ
մենք կը կրենք զատ զատ անուններ նոյնպէս ալ
կը ծառայենք զատ զատ գաղափարների. մեզ բո-
լորես անկարելի կը թուի Միութիւն կազմելն:
Բայց... բայց... մի սքանաւոր, սրբազան պար-
տականութիւն որի մէջ մենք բոլորս ալ հա-
մաձայն ենք, ինչպէս ցոյց կուտայ մեր անց-
եալ գործունէութիւնը. ահա այդ սք. գործը
մեզ կը թելադրէ այդ ամենը մէկգի գնելով
իմի խմբուիլ, (որոտնգոստ ծափահարութիւն).
Մեր այդ սք. նպատակը եղած է և պիտի ըլլայ
ամեն միջոց ի գործ դնել կործանելու հա-
մար Հնչակեանութիւնը (միաձայն, կեցցէ սք.
նպատակ) և որովհետեւ անցեալի մէջ այդ սք.
գործոյն անձնուիրաբար ծառայողն եղած են
Օթեակեաններն, ուստի յանուն այդ ծառա-

